ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 73-Ն

27 սեպտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանՀանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 25-ի թիվ 62 դրական եզրակացությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի (բնակավայր Զորակապ) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային (կցվում է որոշմանը), որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.04 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտավայրը /կադաստրային ծածկագիրը՝ 08-073-0125-0033/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի

կատեգորիա՝ կապի գործառնական նշանակություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասը օտարելու, այդ հողամասում շարժական կապի բջջային կայան տեղադրելու և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 8	Դեմ՝ ... 0	Չեռնպահ՝ ... 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ	բացակա/ա		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ	բացակա/ա		
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	բացակա/ա		
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	բացակա/ա		
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ	բացակա/ա		
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	բացակա/ա		
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ	բացակա/ա		
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

« 27» սեպտեմբերի 2019 թվական
Քաղաք Մարալիկ